



## ԿոՄիտաս

Արշակ Չոպանյանին 1912, 25 դեկտեմբերի, Կ. Պոլիս

Միրելի Արշակ,

Երկար ժամանակ է, ուզում եմ քեզ նամակ գրել, բայց այսօր վաղն ասելով ցարդ ուշացաւ:

Արդէն մասնակի տեղեկանում եմ եւ գիտեմ, թէ այժմ ո՛րքան սուրբ ու ազնիւ, քո սիրած ու պաշտած, կշռած ու մարսած գործն ես մշակում՝ հայուն ապագան է արդ քո հոգածութեանդ առարկան, ուստի բոլոր ուժդ, իրաւամբ, դէպի գերագոյն նպատակն ես ուղղած: Արդէն հայ ազգը քեզ շա՛տ բան է պարտական. դո՛ւն էիր առաջինը, որ լաւ ըմբռնեցիր, թէ մեր ապագան հարթելու համար պետք էր, նախ մեզ օտարներին ծանօթացնել. ցոյց տալ, որ մենք կենսունակ ենք, լուսոյ որդեգիր ու կարապետ ենք խաւար վայրերում, շինարար ենք... եթէ մեր մէջ տեւականութիւնն ու միութիւնը պակաս է եղած, պակասն այն է, որ ազատ շունչ չենք քաշել, նոյնիսկ մեր իբր-անկախութեան օրերումն իսկ՝ հալածուելով տգիտութենէն ու խաւարէն, աւերակէն ու աւարէն, սրէն ու հրէն... Բայց աննկուն բան ունենք մեր մէջ, մի անմար յոյս՝ դէպի ապագայ լուսոյ կանթեղը, որ հայ ժողովուրդը, իր թագաւորութիւնն ու իշխանութիւնը կորցնելէն յետոյ, տարել ու կախել է բազմաբեղուն ու երկնադէտ Արագածի գագաթը՝ երկնքի անտես առաստաղէն, անթել կապով, որ մարդիկ՝ խաւար ու աւարառու ձեռք տալ չը կարողանան եւ գոնէ նորա լուսոյ նշոյլը ցայտէ մեր վերայ եւ մեր ապագայ կեանքը երագենք: Դուն էիր, առաջինը, որ մեր նախնեաց ստեղծագործ հոգին թղթերով ու գրքերով նկարեցիր ու ցուցադրեցիր օտար աշխարհի մէջ քաղաքակրթութեան հարազատ գաւակներին, որ մե՛նք եւս իրենց շաւիղ ենք բռնել, մե՛նք եւս իրենց ճամբան ենք քայլել, մե՛նք եւս մեր ձեռքին լոյս բռնել, եւ, թէպէտ ջանացել են դեւերը փշել ու մարել մեր կեանքը, բայց փշողներն են

խորտակուել եւ մենք դեռ մոխիրների տակ առկայծել ենք՝ ապաւինելով գիտութեան ու կրթութեան, որ թէեւ մերն է եղելէ իբր արեւելքի գաւակներ, բայց մեր ձեռքէն դուրս է եկել ու Եւրոպան լուսաւորել. արդ, քանի որ մեզ համար անձանօթ չէ մեր մտքի նախաստիպը եւ կարողութիւնը, որ այժմ Եւրոպայէն է, որ մեզ լուսաւորում է, ինչո՞ւ չունենանք մեր իսկ լուսոյ ջահը՝ մեր ձեռքին: Դո՛ւն էիր առաջինը, որ հրաւիրեց հայի գեղարուեստական ստեղծագործութեանց ծանօթացնելու քաղաքակիրթ աշխարհին... Արդ, հանգիստ վայելի՛ր եւ ուրախացի՛ր, ո՛ւժ առ եւ ո՛ւժ տուր, պի՛նդ կեցիր, որ բարձրացած դարաւոր ազատութեան ձգտող գոհակներն ու ալիքները չը զարնուն ժայռին ու այս անգամ այլ փշրունն, որի վերջը թերեւս կորստաբեր լինի մեզ համար: